

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

«Հայոց պատմություն» մասնագիտությամբ
մագիստրոսական

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ
XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Կազմեց Հ. Բ. Գրիգորյանը
պատմ. գիտ. թեկն., դոցենտ

Երևան
2016

*Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ պատմության ֆակուլտետի
գիտական խորհուրդը*

Կազմեց պատմ. գիտ. թեկն., դոցենտ Հ. Բ. Գրիգորյանը

Հայ ժողովրդի ազատագրական պայքարը XIX դարի վերջին XX դարի սկզբին
/Կազմեց Հ. Բ. Գրիգորյանը: -Երևան, 2016, 21 էջ:

Մագիստրոսական դասընթացի ծրագիրն ընդգրկում է XIX դարի վերջի XX դարի սկզբի հայոց ազատամարտի հիմնահարցերը: Դասընթացին առնչվող մի շարք հարցեր դիտարկվում են միանգամայն նորովի, ինչը միանգամայն արդիական է դարձնում նրա ուսումնասիրությունը մեր օրերում:

Նպատակը

Դասընթացի նպատակն է մագիստրանտներին ներկայացնել քննության առարկա ժամանակահատվածի հայ ազգային-ազատագրական պայքարի առանցքային հիմնախնդիրները, պարզաբանել ազատամարտի գաղափարախոսական սկզբունքները, զինյալ պայքարի փուլերը, պայքարի ձևերի բազմազանությունը, ազատագրական պայքարի ընթացքում կիրառված մարտավարության փոփոխությունները, ազատամարտին առնչվող ներքին ու արտաքին գործոնները, դրա զինման ու ֆինանսավորման խնդիրները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. Կիմանա դասընթացի վերաբերյալ առկա հիմնական սկզբնաղբյուրներն ու ուսումնասիրությունները, հայ ազատագրական պայքարը նախապատրաստող գաղափարախոսական գործոնները, ազատամարտին առնչվող նշանակալից իրադարձությունները, ազգային-քաղաքական ուժերի կիրառած մարտավարությունը,
2. Կհասկանա հայոց ազատամարտի առանձնահատկությունները և դրա տեղը XIX-XX դդ. ազգային հեղափոխությունների շարքում,
3. Կկարողանա տարբերակել զինյալ պայքարի ձևերը, իրատեսորեն գնահատել դրանցից յուրաքանչյուրի արյունավետությունը, ինչպես նաև ազատագրական ուժերի և առանձին գործիչների տեղն ու դերը հայոց ազատամարտում:

Բովանդակությունը

Թեմա 1` Հայոց ազատամարտի ուսումնասիրության սկզբնաղբյուրները և հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը: **Թեմա 2`** Հայ ազատագրական պայքարի գաղափարախոսական սկզբունքները: **Թեմա 3`** Բեռլինի վեհաժողովի պատմական դասերը. «Երկաթե շերեփի» կարգախոսը: **Թեմա 4`** Հայ ազգային-քաղաքական կուսակցությունները` ազատագրական զինված պայքարի կազմակերպիչներ: **Թեմա 5`** Հայոց ազատամարտի դաշնակիցների հարցը: **Թեմա 6`** Ազատագրական պայքարի փուլերը և ձևերի բազմազանությունը: **Թեմա 7`** Հայոց

ազատամարտի առաջին փուլը: **Թեմա 8**՝ «Զուգակցված հարվածների» մարտավարությունը հայոց ազատամարտում (1895 թ. վերջ – 1898 թ. սկիզբ): **Թեմա 9**՝ Ազատագրական պայքարի նոր մարտավարության մշակումը և ընդունումը: **Թեմա 10**՝ Ազգային-ազատագրական պայքարի նոր մարտավարության կենսագործման ուղիներում: **Թեմա 11**՝ Ազատագրական պայքարի կովկասյան ճակատը: **Թեմա 12**՝ Հայոց ազատամարտի զինման և ֆինանսավորման խնդիրը: **Թեմա 13**՝ Օսմանյան ընդդիմադիր ուժերի համագործակցության խնդիրը: Երիտթուրքական հեղաշրջումը և հայ քաղաքական կուսակցությունների նոր մարտավարությունը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է մագիստրանտի գրավոր աշխատանքի (ռեֆերատ), իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 2 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 5 միավոր: Միավորների քայլը 0.5 է:

ԹԵՄԱ 1.

Հայոց ազատամարտի սկզբնաղբյուրները և հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը

Հիմնահարցի տեղը հայոց պատմության ընդհանուր համակարգում: Հայոց ազատամարտը լուսաբանող հիմնական սկզբնաղբյուրները (արխիվային և տպագիր վավերագրեր, հուշագրություններ, ժամանակի պարբերական մամուլ): Հիմնահարցի ուսումնասիրվածությունը (խորհրդահայ, սփյուռքահայ և ետխորհրդային պատմագրություն):

ԹԵՄԱ 2.

Հայ ազատագրական պայքարի գաղափարախոսական ակունքները

Լուսավորական շարժումը հայ իրականության մեջ XVIII դարի երկրորդ կեսին և XIX դարում: Հայ կրթական համակարգի զարգացումը XIX դարում: Արևելահայ և արևմտահայ կրթական կենտրոնները՝ ազատամարտի կադրերի դարբնոցներ: Մ. Խրիմյան, Մ. Փորթուգալյան, Մ. Սարյան և այլք:

Հայ պարբերական մամուլի սկզբնավորումը և բուռն զարգացումը XIX դարում: Քաղաքական մամուլը ազատագրական պայքարի քարոզիչ և կազմակերպիչ:

Հայ գրականության աննախադեպ վերելքը XIX դարում: Ազգային և սոցիալական ազատության քարոզչությունը գրականության էջերում: Մ. Նալբանդյանը, Բաֆֆին, Ռ. Պատկանյանը, Ս. Շահազիզը, Մ. Պեշիկթաշյանը, Ծերենցը, Մուրացյանը, Մ. Խրիմյանը, Գ. Սրվանձտյանը, Գր. Արծրունին և այլք՝ ազատագրական պայքարի գաղափարախոսներ: Մ. Նալբանդյանը՝ ազգային և սոցիալական ազատության քարոզիչ: Ազատամարտի ծրագրային դրույթները Բաֆֆու վեպերում («Կայծեր», «Խենթը»):

ԹԵՄԱ 3.

Բեռլինի վեհաժողովի պատմական դասերը. «երկաթե շերեփի» կարգախոսը

Հայ հասարակական-քաղաքական շրջանակների հուսախաբությունը Բեռլինի վեհաժողովից: Նոր ուղիների որոնումներ. պայքարի զինված ուղու ընտրությունը:

«Երկաթե շերեփի» կարգախոսը: Զինված պայքարի քարոզչությունը. Մ. Խրիմյան, Գ. Սրվանձտյանց, Գր. Արծրունի, Բաֆֆի, Ռ. Պատկանյան, Ծերենց, Մուրացան և այլք: Պայքարի նոր մարտավարության մշակումը: Հայ ազատագրական պայքարի հետագա վերելքը:

ԹԵՄԱ 4.

Հայ ազգային-քաղաքական կուսակցությունները՝ ազատագրական զինված պայքարի կազմակերպիչներ

Զինված պայքարով Հայաստանն ազատագրելու համար ստեղծված խմբակները և կազմակերպությունները:

Ազգային կուսակցությունների առաջացման պատմական պայմանները, անհրաժեշտությունը և խնդիրները: Ազգային կուսակցությունները Հայկական հարցի լուծման համար մղվող պայքարի կազմակերպիչներ և ղեկավարներ:

Արմենական կուսակցություն: Հիմնադրումը, ծրագիրը, կանոնադրությունը: Արմենական կուսակցությունը և «Արմենիա» թերթը:

Հնչակյան կուսակցություն: Հիմնադրումը, ծրագիրը, կանոնադրությունը: «Հնչակ» թերթը:

Հ. Յ. Դաշնակցություն: Հիմնադրումը, ծրագիրը, կանոնադրությունը: «Դրոշակ» թերթը:

ԹԵՄԱ 5.

Հայոց ազատամարտի դաշնակիցների հարցը

Արտաքին դաշնակիցների խնդիրը: Արտաքին գործոնի վճռորոշ դերը հայոց ազատամարտում: Դրա պատճառները (ժողովրդագրական աննպաստ պայմաններ, Արևմտյան Հայաստանի աշխարհագրական աննպաստ դիրքը և այլն): Բեռլինի պայմանագիրը ստորագրած տերությունները՝ պոտենցիալ դաշնակիցներ:

Ռուսաստանը՝ հայոց ազատամարտի առավել նախընտրելի դաշնակից: Բեռլինի վեհաժողովից հետո ռուսական քաղաքականության կտրուկ շրջադարձը Հայկական հարցում: Ռուսաստանը օսմանյան կայսրությունում ստատուս քվոն պահպանելու կողմնակից: Այն պայմանավորող արտաքին և ներքին պատճառները (Բուլղարիայի «դավաճանությունը», հարավում քաղաքական ակտիվությունը սառեցնելու և այն

Հեռավոր Արևելք փոխադրելու իշխան Լոբանով-Ռոստովսկու քաղաքականությունը, Ալեքսանդր Բ ցարի սպանությունը, գեներալ Մ. Լոռիս-Մելիքովի պաշտոնանկությունը, ռուսական սահմանների մոտ՝ Օսմանյան հովանու ներքո, Ինքնավար Հայաստանի ստեղծման անցանկալիությունը Ռուսաստանի համար և այլն):

Անգլիայի ակտիվ դերակատարությունը Հայկական հարցում 1880-1890-ական թվականներին: Դրա պատճառները: Հայասիրական հուժկու շարժումը Անգլիայում 1890 –ական թվականներին: Հայկական հարցը հոգուտ հայերի լուծելու Անգլիայի ջանքերը 1894-1896 թթ.: Դրանց տապալումը Ռուսաստանի և Ֆրանսիայի կողմից: Կրետեի պատերազմը և Անգլիայի հետաքրքրությունների նվազումը Հայկական հարցի նկատմամբ:

Պարսկաստանի դրական չեզոքությունը հայոց ազատամարտի նկատմամբ:

Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի անտարբեր ու կրավորական կեցվածքը Հայկական հարցում: Գերմանա-թուրքական մերձեցումը XIX դարի վերջին և Գերմանիայի բացասական դիրքորոշումը Հայկական հարցում: «Պրո Արմենիա» ֆրանսալեզու թերթի տպագրումը (1901 թ.) և հայասիրական շարժման ծավալումը Ֆրանսիայում: Ֆրանսիայի հայամետ դիրքորոշումը Հայկական հարցում XX դարի սկզբին:

Օսմանյան լծի տակ գտնվող ժողովուրդների դաշինքի հարցը: Հարևան ճնշվող ժողովուրդների հետ համագործակցելու հարցը հայ քաղաքական կուսակցությունների ծրագրերում: Հայ-քրդական դաշինք ստեղծելու փորձերը (Հրայր, Գևորգ Չավուշ, Մալխաս և այլք), դրանց ձախողման պատճառները:

Համագործակցությունը բուլղար-մակեդոնական կազմակերպությունների հետ: Բուլղար հեղափոխականների հետ համագործակցության ձևերը: Հայ հեղափոխական կառույցների համեմատաբար ազատ գործունեությունը Բուլղարիայում: ՀՅԴ-ի ռազմական դպրոցի ստեղծումը Բուլղարայում:

ԹԵՄԱ 6.

Ազատագրական պայքարի փուլերը և ձևերի բազմազանությունը

Հայոց ազատամարտի փուլերը, դրանց հիմնական բնութագրիչ գծերը:

Ազատագրական պայքարի ձևերի բազմազանությունը. Ֆիդայական կռիվներ, ահաբեկումներ, լոկալ ապստամբություններ, ինքնապաշտպանական մարտեր, արշավանքներ, զինատար խմբեր, ցույցեր, կազմակերպական աշխատանք:

Ազատագրական պայքարի ձևերի կիրառման արդյունավետությունը՝ դրանց գնահատման գլխավոր չափանիշ:

Ընդհանուր ապստամբության հիմնահարցը:

Ֆիդայական կռիվ: Ֆիդայական շարժումը և հայ քաղաքական կուսակցությունները: Ֆիդայական կռիվ տեղն ու դերը հայ ազատագրական պայքարում:

Ահաբեկչությունը որպես ազգային-ազատագրական պայքարի ձև: Հայկական ահաբեկչության առանձնահատկությունները: Ահաբեկումների դասակարգման հիմնական տարբերակները (Ռ. Տեր-Մինասյան, Ա. Նորյան)

Արշավանքների տեղը և դերը հայոց ազատամարտում: Արշավախմբերի բնութագրիչ գծերը:

ԹԵՄԱ 7.

Հայոց ազատամարտի առաջին փուլը

Հայ ազգային-ազատագրական զինյալ պայքարը կանխորոշող օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները: Քաղաքական ռոմանտիզմը ազատամարտի առաջին փուլի բնութագրիչ հատկանիշ:

Հայոց ազատամարտի առաջին քայլերը: Կարինի 1890 թ. հունիսյան իրադարձությունները: Գում Գափուի ցույցը: Ս. Կուկունյանի գլխավորած արշավանքը:

Արևելահայության մասնակցությունը արևմտահայության ազատագրական պայքարին: Զինատար խմբերը: Հայդուկային պայքարի ծավալումը. Արաբո, Գևորգ Չավուշ, Ժիրայր, Ա. Աչըքբաշյան, Հ. Մինաս օղլու և ուրիշներ: Մեծ և Փոքր Չելլոներ:

Սասունի 1894 թ. ապստամբությունը (Մեծն Մուրադ, Հրայր): Բարենորոգումների մայիսյան ծրագիրը: Բաբը Ալիի ցույցը (1895 թ.): Արևմտահայերի զանգվածային կոտորածները: Զեյթունի 1895-1896 թթ. ապստամբությունը:

Ընդհանուր ապստամբությանն Երկրի ուժերի անպատրաստ լինելը:

Հնչակյան կուսակցության պառակտումը և թուլացումը:

ԹԵՄԱ 8.

«Զուգակցված հարվածների» մարտավարությունը հայոց ազատամարտում (1895 թ. վերջ – 1898 թ. սկիզբ)

Ազատագրական պայքարի նոր ուղիների որոնումները (1895 թ. վերջ - 1896 թ. սկիզբ): Արևմտահայերի ինքնապաշտպանության կազմակերպումը, միջազգային անհապաղ միջամտության ապահովումը և բազմահազար զոհերի համար վրեժխնդիր լինելը՝ օրվա խնդիրներ: Հ. Յ. Դաշնակցությունը ազատամարտի նոր փուլի ղեկավար: ՀՅԴ-ի մարտական խմբերի (Աղբյուր Սերոբ, Հրայր, Արամ Արամյան, Նիկոլ Դուման և այլք) անցումն Արևմտյան Հայաստան: «Զուգակցված հարվածների» մարտավարության մշակումը ՀՅԴ ղեկավար և պատասխանատու կառույցների կողմից, դրա բնութագրիչ գծերն ու նպատակները: Կ. Պոլսի դերի կարևորվելը հայոց ազատամարտում:

«Զուգակցված հարվածների» մարտավարության կիրառումը 1896 թվականին: Վանի 1896 թ. ինքնապաշտպանությունը: Կարսի մարզից և Պարսկաստանից դեպի Արևմտյան Հայաստան կատարելիք արշավանքների ձախողումը: Օսմանյան դրամատան գրավումը և Սամաթիայի ռմբահարումները՝ «Զուգակցված հարվածների» մարտավարության բաղկացուցիչ տարրեր: Դրանց միջազգային արձագանքները: Սուլթան Աբդուլ Համիդ Բ-ի և հայ ազգային կուսակցությունների (ՀՅԴ, Վերակազմյալ հնչակյաններ) բանակցությունների սկիզբը:

1895-1896 թվականները ազատագրական պայքարի բարձրակետ: Հայ ազատագրական շարժումը՝ ռազմական և քաղաքական գործոն Օսմանյան կայսրությունում:

«Զուգակցված հարվածների» մարտավարության կիրառումը 1897 թվականին: Խանասորի արշավանքը (1897 թ. հուլիս) և Բաբ Ալիի ռումբը (1897 թ. օգոստոս): Կիրառվող մարտավարության ձախողումը:

ԹԵՄԱ 9.

Ազատագրական պայքարի նոր մարտավարության մշակումը և ընդունումը

Փոփոխություններ ազգային կուսակցությունների պայքարի մարտավարության մեջ: ՀՅԴ 2-րդ ընդհանուր ժողովը և ազատամարտի նոր մարտավարության մշակումը: Արտաքին գործոնի դերի հստակեցումը: Հրաժարում ֆիդայական պատերազմի մարտավարությունից և անցում զինամարզական խմբերի ստեղծմանը: Զինական, դրամական և կոլոդ ուժերի **կենտրոնացումը** ապագա ապստամբավայրերում՝ նոր մարտավարության գլխավոր խնդիր: Բարձրավանդակը (Տարոն-Սասուն), Լեռնավայրը (Կիլիկիա) և Վան-Շատախի շրջանը՝ ապագա ապստամբավայրեր: Զինյալ պայքարի մյուս ձևերի ենթարկեցումը կենտրոնացման խնդրի իրականացմանը:

ԹԵՄԱ 10.

Ազգային-ազատագրական պայքարի նոր մարտավարության կենսագործման ուղիներում

Արևմտյան Հայաստանը XX դարի սկզբին: Ազատամարտի մարտավարական երկու գծերի միջև մրցակցությունը: Հրաժարում զինատար խմբերից և զենքի փոխադրման «ծծման» մեթոդի կիրառումը: Առաքելոց վանքի կռիվը (1901 թ.): Պայքար Տարոն-Սասունում ուժերի կենտրոնացման մարտավարությունը կենսագործելու համար (Հրայր, Վահան):

Օսմանյան իշխանությունների կանխարգելիչ քայլերը: Սասունը նոր ապստամբության նախաշեմին: Վերադարձ զինատար խմբերի և արշավախմբերի կազմակերպման գործելակերպին: Սասունի շարժման վաղաժամ բռնկումը: Անդրանիկը զինվորական ղեկավար: ՀՅԴ 3-րդ ընդհանուր ժողովի (1904 թ. փետրվար-մարտ) որոշումները Սասունին օժանդակելու նպատակով ձեռնարկվելիք միջոցառումների մասին: Երկիր արշավախմբեր ուղարկելու և Սասունին աջակցելու նպատակով նախատեսված ՀՅԴ այլ ձեռնարկների ձախողումը: Ապստամբության պարտությունը: Հայդուկային խմբերի հեռացվելը Տարոն-Սասունից:

Սասունի 1894 թ. և 1904 թ. ապստամբությունների ընդհանրությունները և էական տարբերությունները:

Ելըրզի ռումբը և Իզմիրի ձեռնարկները, դրանց ձախողման պատճառները, արձագանքները և հետևանքները:

Արևմտահայ ազատամարտի հետագա ընթացքը 1905-1907 թթ., դրա հանրագումարը և արդյունքները:

ԹԵՄԱ 11.

Ազատագրական պայքարի կովկասյան ճակատը

Արևելահայությունը XIX դարի վերջին XX դարի սկզբին: Ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականության խստացումը Այսրկովկասում: 1903 թ. հունիսի 12-ի օրենքը: Հայ եկեղեցական կալվածքների բռնագրավումը և հայկական դպրոցների փակումը: Հակացարական ժողովրդական շարժումը: Ցույցեր, հանրահավաքներ, զինված ելույթներ: Ահաբեկչական գործողություններ: 1903-1904 թթ. շարժումների ազգային-ինքնապաշտպանական բնույթը:

Հայ քաղաքական կուսակցությունների մարտավարության փոփոխությունը: Կովկասահայ դատի որդեգրումը: ՀՅԴ 3-րդ ընդհանուր ժողովի որոշումը ցարիզմի դեմ պայքարը զուտ ինքնապաշտպանության շրջանակում իրականացնելու մասին: ՀՅԴ-ի մասնակցությունը Ռուսաստանի հեղափոխական և ժողովրդավարական կուսակցությունների առաջին խորհրդածողովին (Փարիզ, 1904 թ. նոյեմբեր): ՀՅԴ-ի «Կովկասյան նախագիծը»: Հայ ազգային կուսակցությունների մասնակցությունը համառուսական հեղափոխական շարժմանը:

Ազգային և սոցիալական պայքարի հետագա վերելքը:

Հայ-թաթարական կռիվները Այսրկովկասում 1905-1906 թթ., դրանց պատճառները, ընթացքը և փուլերը: ՀՅԴ-ն հայկական ինքնապաշտպանության կազմակերպիչ և ղեկավար: Հայ-թաթարական կռիվների արդյունքները և հետևանքները:

ԹԵՄԱ 12.

Հայոց ազատամարտի զինման և ֆինանսավորման խնդիրը

Ազատամարտի ռազմաֆինանսական բազայի ստեղծման հնարավոր աղբյուրները: Արտաքին ֆինանսավորման հարցը: Ներքին աղբյուրները:

Ազատամարտի մարտավարական նոր խնդիրները XIX դարավերջին և լրացուցիչ միջոցների հայթայթման անհրաժեշտությունը: Բռնի հանգանակության պարտադրան-

քը: ՀՅԴ-ի «Փոթորիկ» խմբի ստեղծումը: «Փոթորիկ» գործողության առաջին շրջանը: Զմյուռնիայի (Իզմիր) տեղը դրամական միջոցների հայթայթման գործում: Բռնի հանգանակության առաջին շրջանի հանրագումարները. Արդյունքներ և հետևություններ:

Հայ-թաթարական 1905-1906 թթ. կռիվները և կովկասահայերին զինելու անհրաժեշտությունը: «Փոթորիկ» գործողության երկրորդ շրջանը:

Բռնի հանգանակության բացասական հետևանքները և դրանից հրաժարվելը:

ԹԵՄԱ 13.

Օսմանյան ընդդիմադիր ուժերի համագործակցության խնդիրը: Երիտթուրքական հեղաշրջումը և հայ քաղաքական կուսակցությունների նոր մարտավարությունը

Սուլթանին ընդդիմադիր երիտթուրքական կազմակերպությունների ստեղծումը XIX դարի վերջին – XX դարի սկզբին: «Իթթիտատ» (Ահմեդ Ռիզա) և «Ապակենտրոնացում և անձնական նախաձեռնություն» (Մեհմեդ Սաբահեդդին) կուսակցությունները՝ սուլթանին ընդդիմադիր գլխավոր ուժեր թուրքական միջավայրում:

Հայ ազգային-քաղաքական կուսակցությունների և երիտթուրքերի առաջին շփումները 1890-ական թվականներին: Օսմանյան ընդդիմադիր ուժերի առաջին համաժողովը (Փարիզ, 1902 թ.): Հակասուլթանական ուժերի դաշինքի ձևափոխման պատճառները: Երիտթուրքերի և հայ ազգային կուսակցությունների հետագա բանակցությունները:

ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովի որոշումը (Վիեննա, 1907 թ. փետրվար-մայիս) Օսմանյան կայսրությունում հակահամիդյան ուժերի դաշինք ստեղծելու անհրաժեշտության մասին: Դրա պատճառները: Հակասուլթանական ուժերի երկրորդ համաժողովը (Փարիզ, 1907 թ. դեկտեմբեր): Հակասուլթանական դաշինքի ստեղծումը:

Երիտթուրքական հեղաշրջումը (1908 թ. հուլիս): Օսմանյան կայսրության վերածվելը սահմանադրական միապետության: Հայ քաղաքական կուսակցությունների ծրագրերի համապատասխանեցումը սահմանադրական Թուրքիայի պայմաններին: Հայկական հարցը միջազգային քննարկման խնդիր դարձնելուց հրաժարվելը և արևմտահայերին հուզող հարցերի լուծումը օսմանյան կայսրության ժողովրդավարացման հետ կապելը: Հայ քաղաքական կուսակցությունների մարտական

կառույցների վերացումը, հայդուկային խմբերի ցրումը և պայքարի անլեզալ ձևերից հրաժարվելը: Արևմտահայ ազատամարտի դադարեցումը:

Ռեֆերատների թեմաներ

1. Ազատագրական պայքարի ձևերի բազմազանությունը և կիրառման արդյունավետությունը ազատամարտի տարբեր փուլերում:
2. Հայդուկային պայքարը, նրա դերը հայոց ազատամարտի առաջին փուլում:
3. Արշավախմբերը, նրանց դերը հայոց ազատամարտի տարբեր փուլերում:
4. Մհաբեկչությունը՝ ազգային ազատագրական պայքարի ձև (XIX դարի վերջ - XX դարի սկիզբ):
5. Արտաքին գործոնի դերը հայոց ազատամարտում. դաշնակիցների հարցը:
6. 1890-ականների զանգվածային ջարդերի ազդեցությունը հայոց ազատամարտի մարտավարության վրա:
7. «Զուգակցված հարվածների» մարտավարությունը 1896 թվականին:
8. «Զուգակցված հարվածների» մարտավարությունը 1897 թվականին:
9. Մուլթան Աբդուլ Համիդ Բ-ի և հայ ազգային կուսակցությունների բանակցությունները (1896-1899 թթ.):
10. Ազատամարտի նոր մարտավարության ընդունումը ՀՅԴ-ի 2-րդ ընդհանուր ժողովում: Ընդհանուր ապստամբության հարցը:
11. Ազատամարտի մարտավարական երկու գծերի միջև մրցակցությունը Տարոն-Մասունում XIX դարի վերջին - XX դարի սկզբին:
12. Հայոց ազատամարտի զինման և ֆինանսավորման խնդիրը (XIX դարի վերջ - XX դարի սկիզբ):
13. Մասունի 1894 թ. և 1904 թ. ապստամբությունների ընդհանրությունները և էական տարբերությունները:
14. Հայ-բուլղարական զինական համագործակցությունը (XIX դարի վերջ - XX դարի սկիզբ):
15. Ելդըզի ռումբը և Իզմիրի ձեռնարկները, դրանց ձախողման պատճառները, արձագանքներն ու հետևանքները:

16. Օսմանյան ընդդիմադիր ուժերի համագործակցության խնդիրը.
Հակասուլթանական ուժերի 1-ին և 2-րդ համաժողովները:
17. Երիտթուրքական հեղաշրջումը, հայոց ազատամարտի մարտավարության փոփոխությունը:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ա) Տպագիր սկզբնաղբյուրներ

1. Ակնունի Է., Դեպի կռիվ, Ժընև, 1904:
2. Ակնունի Է., Կովկասեան վերքեր, Ժընև, 1903:
3. Անդրանիկ, Մարտական հրահանգներ, Ժընև, 1906:
4. Անդրանիկի յուշերը, Պէրուլթ, 1935:
5. Առաքելոց վանքին կռիւր (հայ յեղափոխութենէն դրուագ մը), պատմեց՝ զօր. Անդրանիկ, գրի առաւ՝ Լ. Կ. Լիլլէճեան, Պօսթըն, 1924:
6. Արամը, մահուան յիսնամեակին առթիւ, Եր., 1991:
7. Արմեն Գարօ, Ապրուած օրեր, Բոստըն, 1948:
8. Բերբերեան Ռ., Ի՞նչպէս հեռացայ հնչակեան կուսակցութիւնից, «Հայրենիք» ամսագիր, 1943, N 1:
9. Բերբերեան Ռ., Պատրանքների շրջանից, «Վեմ», Փարիզ, 1937, N 3, 1938, NN 1-4:
10. Դավթեան Յ., Ա. հատոր, խմբ. Խ. Տեր-Գրիգորեանի, Աթենք-Պէրուլթ, 1988:
11. Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն, Յուշեր 1890էն 1940, Բ տպագր., Եր., 2003:
12. Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, յավելված «Հայրենիք» ամսագրի, խմբ. Ս. Վրացեան. Պոսթըն, հատ. 1, 1934, հատ. 2, 1938:
13. Երամեան Հ., Յուշարձան Վան-Վասպուրականի, հատ. Բ., Ադէքսանդրիա, 1929:
14. Ի՞նչպէս սպաննուեցաւ Պշարէ Խալիլ, պատմեց՝ Զօր. Անդրանիկ, գրի առաւ՝ Լ. Կ. Լիլլէճեան, «Հայրենիք» ամսագիր, ապրիլ, 1941, թիւ 6, էջ 54-65, մայիս, 1941, թիւ 7, էջ 92-100:
15. Լազեան Գ., Հայաստան եւ հայ դատը հայելոյս յարաբերութիւններու լոյսին տակ, Եր., 1991:
16. Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925:

17. Մալխաս, Ապրումներ, Ա. հատոր, ք. տպագր., Պէրուֆ, 1956:
18. Միքայելյան Ք., Հեղափոխականի մտքերը, Եր., 1990:
19. Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան 1890-1950, Բօստոն, 1950:
20. Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, իմբ. Հ. Տասնապետեանի, Պէրուֆ, հատ. Ա., ք. տպ., 1984, հատ. Բ., ք. տպ., 1985, հատ. Գ., 1976, հատ. Դ., 1982, հատ. Ե., իմբ. Ե. Փամպուքեանի, 2007:
21. Ռոստոմ, մահուան վաթսունամեակին առթիվ, իմբ. Հ. Տասնապետեանի, Պէրուֆ, 1979:
22. Ռոստոմ, Նամականի, մահուան ութսունամեակին առթիւ, իմբ. Հ. Տասնապետեանի, Պէրուֆ, 1999:
23. Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատ 1-6, Եր., 1990:
24. Սապահ-Գիւլեան Ստ., Երիտասարդ Թուրքիա, Եր., 1991:
25. Սիմոն Զավարեան, մահուան եօթանասունամեակին առթիւ, իմբ. Հ. Տասնապետեանի, հատ. Բ., Պէրուֆ, 1992:
26. Վաթսունամեակ (1890-1950), կազմեց Ս. Վրացեան, Պոսթըն, 1950:
27. Վարդօ, Տասը տարի Հայ Յեղ. Դաշնակցութեան մէջ. Պատմական ակնարկ այդ կազմակերպութեան անցեալի եւ ներկայի ու եզրակացութիւններ ապագայի մասին, Վառնա, 1906:
28. Փափազեան Վ., Իմ յուշերը, հատոր առաջին, երկրորդ, Պէրուֆ, 1952:
29. Քրիստափոր Միքայէլեանի նամակները, իմբ. Հ. Տասնապետեանի, Պէրուֆ, 1993:

բ) Ուսումնասիրություններ

1. Ահարոնեան Ա., Քրիստափոր Միքայէլեան, Բոստոն, 1926:
2. Աղայան Ծ. Պ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Եր., 1976:
3. Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում, հատոր 3, Վենետիկ, 1926:
4. Գանգրունի Հ., Հայ յեղափոխութիւնը օսմանեան բռնատիրութեան դեմ (1890-1910), Պէրուֆ, 1973:

5. Գրիգորյան Հ., Ահաբեկչությունը որպես ազգային-ազատագրական պայքարի ձև (19-րդ դարի վերջ-20-րդ դարի սկիզբ), // Հայոց ցեղասպանություն. Պատճառներ և դասեր, մաս 2, Եր., 1995, էջ 39-72:
6. Գրիգորյան Հ., 1894-1896 թթ. զանգվածային ջարդերի ազդեցությունը Հայոց ազատամարտի հետագա մարտավարության վրա, // «Տարեգիրք», Երևանի պետական համալսարան, պատմության ֆակուլտետ, Եր., 2005, էջ 24-48:
7. Գրիգորյան Հ., Հայ ազատագրական պայքարի մարտավարությունը 1895-1898 թթ., Եր., 2002:
8. Գրիգորյան Հ., Հայ-բուլղարական զինական համագործակցությունը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, // Հայաստան-Բուլղարիա. Անցյալը, ներկան և ապագան: Գիտաժողովի զեկույցների ժողովածու, Եր., 2009, էջ 34-41:
9. Գրիգորյան Հ., Հայկական զինախմբերը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին (զեկույցման հիմնադրույթներ), // Հայկական բանակ-15 հանրապետական գիտաժողով, 26 հունվարի 2007, Եր., էջ 36-39:
10. Գրիգորյան Հ., Հայոց ազատամարտի զինման ու ֆինանսավորման խնդիրը (1890-1908 թթ.), Եր., 2004:
11. Գրիգորյան Հ., ՀՅԴ Ցուցական պատասխանատու մարմնի ստեղծումը և գործունեությունը մինչ Կ. Պոլիս անցնելը, // «Պատմություն և մշակույթ», 2016, էջ
12. Գևորգյան Հ., Ազատագրական պայքարի կովկասյան ճակատը, Եր., 2010:
13. Գևորգյան Հ., Ազատագրական պայքարի հերոսապատումից, Եր., 2006:
14. Գևորգյան Հ., Էջեր հայոց ազատամարտի, Եր., 2005:
15. Գևորգյան Հ., Նիկոլ Դուման, Եր., 2013:
16. Եազրճեան Գ., Ապտիլ Համիտ Բ. Կարմիր Սուլթանը, Պէյրուք, 1980:
17. Եղիազարյան Կ., Սարգիս Կուկունյանի արշավանքը, Եր., 2016:
18. Թառոյան Կ., Արևմտահայերի ազատագրական պայքարը XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին, Եր., 1980:
19. Լեօ, Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, Պարիզ, հատ. Ա., 1934, հատ. Բ., 1935:
20. Խուդինյան Գ., Հ. Յ. Դաշնակցության քննական պատմություն. Ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը, Եր., 2006:

21. Խուրշուղյան Լ., Հայկական հարցը, Եր., 1995:
22. Կոստանդյան Է., Մկրտիչ Խրիմյան: Հասարակական-քաղաքական գործունեությունը, Եր., 2000:
23. Համբարյան Ա., Հայ հասարակական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին (XIX դարի վերջ – XX դարի սկիզբ), Եր., 1990:
24. Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908 թթ.), Եր., 1999:
25. Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հատ. VI, Եր., 1981:
26. Հայոց պատմություն, ՀՀ ԳԱԱ, հատ. III, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – 1918 թ.), գիրք առաջին, Եր. 2010:
27. Հովհաննիսյան Գ., Հնչակյան կուսակցության պատմություն (1887-1915 թթ.), Եր., 2012:
28. Հովհաննիսյան Ռ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը (XIX դ. 70-80-ական թթ.), Եր., 1965:
29. Ղազարեան Վ., Արմենական կուսակցութիւնը, Պէյրուօ, 1985:
30. Ճերեճեան Ե., Արիւնտ գոյերթի վկաներ, Պէյրուօ, 1989:
31. Մկրտչյան Լ., Զեյթունի 1895-1896 թթ. ապստամբությունը, Եր., 1995:
32. Նալբանդյան Լ., Հայ հեղափոխական շարժում. Հայ քաղաքական կուսակցությունների զարգացումը 19-րդ դարի ընթացքում, Եր., 2012:
33. Ներսիսեան Ա., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն (1898-1908), Բ. Հատոր, Պէյրուօ, 2008:
34. Ներսիսեան Ա., Ռուբէն, Եր., 2007:
35. Ներսիսյան Ա., Ազգային ազատագրական պայքարը Տարոնում 1894-1908 թթ., Եր., 1999:
36. Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թյուրքական բռնատիրության դեմ 1850-1870 թթ., Եր., 1955:
37. Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թյուրքական բռնապետության դեմ 1850-1890 թթ., Եր., 2002:
38. Նորեան Ա., Դրւագներ Հ. Յ. Դաշնակցութեան գործունեութիւնից. Ա. տասնամեակ, Բօստոն, 1917:

39. Չորմիսեան Լ., Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, Բ հատոր, 1878-1908, Պէրուր, 1974:
40. Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան. 1887-1962, խմբ. Ա. Կիստուր, Ա. Հատոր, Պէրուր, 1962:
41. Պողոսյան Հ., Զեյթունի պատմությունը 1409-1921, Եր., 1969:
42. Սասունի Կ., Ընդհանուր ապստամբութեան խնդիրը հայ ազատագրական շարժման մէջ (համառոտ ակնարկ քառասունամեայ անցեալի վրայ), «Դրօշակ», 1930, N 11-12, էջ 327-333:
43. Սասունի Կ., Հրայրի դերը (Ակնարկ մը անոր յեղափոխական նկարագրին վրայ), «Հայրենիք» ամսագիր, փետրուար, 1931, թիւ 4, էջ 72-88:
44. Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, Պէրուր, 1956:
45. Սարգսյան Ս., Հայ սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908-1921 թթ.), Եր., 2009:
46. Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք I, գիրք II, Եր., 2003, գիրք III, Եր., 2009, գիրք IV, Եր., 2010:
47. Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիրք Ա., Եր., 1996:
48. Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., 1991:
49. Սիրվարդ, Մեծն Մուրատ (Համբարձում Պոյաճյան), կյանքն ու գործունեությունը, Եր., 1991:
50. Վարանդեան, Անաչառութեան ասպետը, «Հայրենիք» ամսագիր, նոյեմբեր, 1926, թիւ 1, էջ 69-78, դեկտեմբեր 1926, թիւ 2, էջ 128-133, յունուար, 1927, թիւ 3, էջ 122-130:
51. Վարանդեան Ս., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Եր., 1992:
52. Վարանդեան Ս., Մուրատ (Սեբաստացի ռազմիկին կեանքն ու գործը), Պոսթըն, 1931:
53. Վարանդեան Ս., Ուշացած մարգարէներ (Լէօն եւ հայկական շարժումը), «Հայրենիք» ամսագիր, հոկտեմբեր, 1925, թիւ 12, էջ 59-71, նոյեմբեր, 1925, թիւ 1, էջ 104-130, յունուար, 1926, թիւ 3, էջ 97-107, փետրուար, 1926, թիւ 4, էջ 84-98:
54. Տասնապետեան Հ., Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդհ. ժողով (1890-1924), Աթէնք, 1988:
55. Տասնապետեան Հ., Հ. Յ. Դաշնակցութեան յեղափոխական-մարտական գործունեութիւնը, Պէրուր, 1994:

56. Емец В. Л., Игнатъев А. В. и др., История внешней политики России. Конец XIX начало XX века, Москва, 1999.
57. Киняпина Н. С., Георгиев В. А., Панченкова М. Т., Шеремет В. И., Восточный вопрос во внешней политике России (конец XVIII – начало XX вв.), Москва, 1978.
58. Косев Д., Новая история Болгарии, Москва, 1952.
59. Кочар М., Армяно-турецкое общественно-политические отношения и Армянский вопрос в конце XIX – начале XX веков, Ереван, 1988.
60. Лорд Кинрос, Расцвет и упадок Османской империи, Москва, 1999.

Բովանդակություն

Թեմա 1

Հայոց ազատամարտի ուսումնասիրության սկզբնաղբյուրները և հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը.....

Թեմա 2

Հայ ազատագրական պայքարի գաղափարախոսական ակունքները.....

Թեմա 3

Բեռլինի վեհաժողովի պատմական դասերը. «Երկաթե շերեփի» կարգախոսը.....

Թեմա 4

Հայ ազգային-քաղաքական կուսակցությունները՝ ազատագրական զինված պայքարի կազմակերպիչներ.....

Թեմա 5

Հայոց ազատամարտի դաշնակիցների հարցը.....

Թեմա 6

Ազատագրական պայքարի փուլերը և ձևերի բազմազանությունը.....

Թեմա 7

Հայոց ազատամարտի առաջին փուլը.....

Թեմա 8

«Զուգակցված հարվածների» մարտավարությունը հայոց ազատամարտում (1895 թ. վերջ – 1898 թ. սկիզբ).....

Թեմա 9

Ազատագրական պայքարի նոր մարտավարության մշակումը և ընդունումը.....

Թեմա 10

Ազգային-ազատագրական պայքարի նոր մարտավարության կենսագործման ուղիներում.....

Թեմա 11

Ազատագրական պայքարի կովկասյան ճակատը.....

Թեմա 12

Հայոց ազատամարտի զինման և ֆինանսավորման խնդիրը.....

Թեմա 13

Օսմանյան ընդդիմադիր ուժերի համագործակցության խնդիրը:
Երիտթուրքական հեղաշրջումը և հայ քաղաքական կուսակցությունների
նոր մարտավարությունը.....